

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

29.01.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ա.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը,
Ս.Դավթյանը,
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ
Ա.Ավագյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի
պետ Ա. Հարությունյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի
պետ Լ. Մարկոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի
պետ Կ.Կոյունջյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի
պետ Ա. Համբարձումյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի
վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի
պետ Վ. Արևշատյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի
պետ Հ. Եղիազարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սողոմոնյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության և էներգետիկայի բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը:

Նիսպում լավեցին հեղեղալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան /

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական /

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Պարենի համաշխարհային ծրագրին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

Ձեկուցող՝ Լ.Մարկոսյան /

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական /

3. «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա.Հարությունյան /

Որոշեցին՝

Հաստատել «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը հաստատելու մասին» թիվ 43-Ա որոշումը:

/Անհատական/

4. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի « ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 186 համայնքների (բնակավայրերի)» ցանկը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավագյան /

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի « ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 186 համայնքների (բնակավայրերի)» ցանկը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 19-րդ տողի 5-րդ սյունակի «Ֆիդելտովո (Գուգարքի շրջ.)» բառերը փոխարինել «Եղեգնուտ (Գուգարքի շրջ.)» բառերով:

/Անհատական/

Լսեցին՝

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2017 թվականի նոյեմբերի 29-ից 30-ը ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության և ներքին շուկայի, արդյունաբերության, ձեռնարկատիրության և ՓՄՁ-ների գլխավոր տնօրինության կողմից կազմակերպված «Զբոսաշրջության սատելիտային հաշվի վարումն ու կազմումը» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Բ. Պողոսյան/

5.2 Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2017 թվականի դեկտեմբերի 11-ից 12-ը «ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից կազմակերպված Կայուն զարգացման նպատակների համար ինտեգրված վիճակագրության վերաբերյալ փորձագիտական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Սողոմոնյան/

5.3. Հաղորդում՝ Իրանի Թեհրան քաղաքում 2017 թվականի դեկտեմբերի 10-ից 13-ը Վիճակագրական բիզնես ռեգիստրներում «Վարչական տեղեկատվության կիրառման կատարելագործում» խորագիրը կրող տարածաշրջանային ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցողներ՝ Վ.Արևշատյան, Ն.Գրիգորյան/

5.4. Հաղորդում՝ Իսպանիայի Մադրիդ քաղաքում 2017 թվականի դեկտեմբերի 12-ից 14-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից Իսպանիայի վիճակագրության ազգային իստիտուտում (INE_ES) կազմակերպված «Վիճակագրական տեղեկատվության տարածումը և հաղորդակցումը» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցողներ՝ Ն. Մուշեղյան, Հ. Եղիազարյան/

5.5. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2017 թվականի դեկտեմբերի 12-ից 14-ը Միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների համար կազմակերպված սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Մ.Երիցյան/

5.6. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2017 թվականի դեկտեմբերի 20-ին «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ-պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան/

5.7. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2018 թվականի հունվարի 15-ից 16-ը Միգրացիայի վիճակագրության միջազգային համաժողովի «Միգրացիայի տվյալների բարելավումը քաղաքականության համար. Տվյալների արդիականացում, կարողությունների զարգացում ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում» «Հայաստանի փորձը» խորագրով նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Կ. Կոյունջյան/

5.8. Հաղորդում՝ Բելառուսի Մինսկ քաղաքում 2018 թվականի հունվարի 15-ից 18-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության, Նիդեռլանդների վիճակագրության ու Բելառուսի վիճակագրական կոմիտեի աջակցությամբ կազմակերպված «Բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգը և Կայուն զարգացման նպատակների ցուցանիշները» թեմայով տարածաշրջանային վերապատրաստման սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն. Մանդայան, Ա. Համբարձումյան /

5.9 Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2018 թվականի հունվարի 17-ից 18-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» 6-րդ խմբագրության հիմնական առանձնահատկությունները, դրանց հետ կապված խնդիրները թեմայով սեմինարին, ինչպես նաև համապատասխան անձնակազմի հետ մասնագիտական քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Բ. Պողոսյան, Հ. Ջանլաթյան, Լ. Բեյբոյան /

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

09.02.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ա.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը,
Ս.Դավթյանը,
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի
պետ Ա. Հարությունյանը,

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 11-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի հունվարի 27-ի թիվ 02-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 11-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

26.02.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը,
Ս.Դավթյանը,
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի
պետ Լ.Մարկոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ
Լ. Քալանթարյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների
բաժնի պետ Մ. Երիցյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ
Կ.Կույունջյանը,
ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի
ավագ վիճակագիր Ա.Մարտիրոսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան /

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

2. «Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը, «Առևտրային կազմակերպություններում թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 24-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

Որոշեցին՝

Հաստատել «Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը՝ «Առևտրային կազմակերպություններում թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի, ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 24-Ն որոշումը: Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

3. «Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը հաստատելու և 2017 թվականի դեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակաշրջան սահմանելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ.Երիցյան/

Որոշեցին՝

Հաստատել 2018 թվականի սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը՝ համաձայն հավելվածի և հաշվարկների համար որպես բազիսային ժամանակահատված սահմանել 2017 թվականի դեկտեմբեր ամիսը:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» հետազոտության անվանազերծված տվյալների բազան Ավստրալիայի Քերթինի համալսարանի Բիզնես դպրոցի Բանկվեստ տնտեսագիտական կենտրոնի ավագ հետազոտող Աստղիկ Մավիսակալյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնին՝ Ավստրալիայի Քերթինի համալսարանի Բիզնես դպրոցի Բանկվեստ տնտեսագիտական կենտրոնի ավագ հետազոտող Աստղիկ Մավիսակալյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված՝ «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2018 թվականի հունվարի 24-ից 26-ը «Տվյալների հավաքագրման էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառումը Մարդահամարների և կացարանների հաշվառման գործընթացում» խորագրով աշխատաժողովի վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կոյունջյան/

5.2. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2018 թվականի հունվարի 29-ից փետրվարի 9-ը «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» 6-րդ խմբագրության հիմնական առանձնահատկությունների մասնագիտական քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան /

5.3. Հաղորդում՝ Ֆինլանդիայի Հելսինկի քաղաքում 2018 թվականի փետրվարի 14-ից 15-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս. Մնացականյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/